

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 20-Ի N 436-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության 2017/2018 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին» N 436-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «<12>> թիվը փոխարինել «<20>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հրթրության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան»

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը.

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 436-Ն որոշման մեջ փոփոխությունը պայամանվորված է շահագրգիռ կողմերի ներկայացվող պահանջներից: Առաջարկվող փոփոխության միջոցով նախատեսվում է կարգավորել ինտերնատուրայի միջոցով կադրերի պատրաստման անհրաժեշտությունը և բժիշկ-սպաների պահանջարկի ապահովումը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ 2016/2017 ուսումնական տարում ԵՊԲՀ-ի ռազմաբժշկական ֆակուլտետի մագիստրատուրան ավարտելու են 18 կուրսանտ, իսկ ՊՆ պատվերով՝ 2 ուսանող: ՀՀ կառավարության 1994թ. մայիսի 19-ի N° 232 որոշմամբ ԵՊԲՀ ավարտած և տվյալ տարվա ընթացքում պետական կրթական համակարգի ինտերնատուրայում կամ օրդինատուրայում չհրամանագրված կամ հրամանագրված և մինչև ուսման ավարտը որևէ հիմքով ինտերնատուրայից կամ օրդինատուրայից հեռացված քաղաքացին ենթակա է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի՝ հաշվի առնելով ստացած մասնագիտությունը: Ելնելով վերոգրյալից ՀՀ ԶՈՒ զինծառայողը առանց ինտերնատուրան ավարտելու մասնագետ բժշկի պաշտոնում ինքնուրույն աշխատելու իրավունք չունի:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել Հայաստանի Հանրապետությունում ինտերնատուրայի ընդունելությունը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Առաջարկվող փոփոխության **նպատակն է** կանոնակարգել ինտերնատուրայի ընդունելությունը և կարգավորել իրավական դաշտը տվյալ բնագավառում:

2017-2018 ուսումնական տարում ՀՀ պաշտպանության նախարարության համար ինտերնատուրա ընդունելության հավելյալ 8 տեղի հատկացման հարցը կլուծվի 09.04.02. «03 Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրով նախարարության համար նախատեսված չափաքանակների սահմաններում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ:

6. Ակնկալվող արդյունքը.

Որոշման ընդունումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկ-սպաների պահանջարկը և ապահովել ինտերնատուրայում նրանց ուսուցումը շարունակելու հնարավորությունը:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 436-Ն

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին:

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 436-Ն

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի
N 436-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>>**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p align="center">ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p align="center">հունիսի 13-ի թիվ 01/9-2/10589-17 գրություն</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p align="center">հունիսի 16-ի թիվ ՊՆ/510-821 գրություն</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p align="center">հունիսի 28-ի թիվ 01/19.2/11159-17 գրություն</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	<p>Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին</p>	